# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Աստղիկ Գրատուն ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/55 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 7 | Մարմնամարզական պատ – Հենարանային կանգնակները պատրաստված են պինդ սոճուց, աստիճանաձողերը՝ պինդ հաճարենուց : Մարմնամարական պատի բարձրությունը պետք է լինի 2900 մմ, լայնությունը՝ 900մմ, վերին հատվածի խորությունը՝ 280մմ, և, 140մմ՝ մնացած բարձրության երկայնքով: Ուղղահայաց կանգնակների հատվածքի չափերն են՝ 140x40մմ: Աստիճանաձողերը օվալաձև են Φ35x50(h)մմ չափերի /տես նկար-1/: Աստիճանաձողերի միջև առանցքային հեռավորությունը 180մմ է : Աստիճանաձողերի առավելագույն ծանրաբեռնվածությունը 120կգ է: Ստորին ձողը տեղակայված հատակից 150մմ բարձրության, իսկ վերին ձողը պետք է լինի 80 մմ առաջ մյուս աստիճանաձողերի համեմատ: Վերին ձողը ունի կլոր հատվածք՝ Φ40մմ տրամագծով: Այն նախատեսված է ձողան օգտագործելու համար: Վերին ձողանի հեռավորությունը ներքևի աստիճանաձողից 400մմ է : Վերին ձողանը լաքապատված է բարձրորակ է խոնավակայուն և չսահող լաքապատված է : Աստիճանաձողերի ամրացումը կատարվում հատուկ սոսնձով : Մարմնամարզական պատի բոլոր ամրացումները իրականացվում են բարձրորակ և ամուր դետալներով՝ հաշվի առնելով մարզադահլիժի առանձնահատկությունները, հատակին հպվող մասի տակ ռետինե դետալներ են և դիմակայում են առավելագույն ծանրաբեռնվածության հանրագումարին: Նմուշը /Նկար 7,8/ կցվում է: Ապրանքները նոր են և չօգտագործված: Չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել |

| | |
|---|---|
| | նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը` ըստ հասցեների իրականացվում է Մատակարարի կողմից: Եթե մատակարարումը իրականացվում է պահեստավորման վայր, ապա Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց, իսկ Վաճառողը պարտավորվում է տեղադրման ենթակա ապրանքների տեղադրումը վերջնական վայրում իրականացնել, երբ համապատասխան ապրանքները կտեղափոխվեն վերջնական վայր` Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում:Մինչև մատակարարումը չափաբաժնում ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նմուշ նկարները տրվում են զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Астхик Гратун ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/55 ниже представляет полное описание предлагаемого им товара.

<table>
<tr><td rowspan="2">Номер лота</td><td>Предлагаемый товар</td></tr>
<tr><td>технические характеристики</td></tr>
<tr><td>7</td><td></td></tr>
</table>